ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՄԻՈՒԹԵՐՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂ — № 36։

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԹՈՒՐՔԻԱՆ

ԳՐԵՑ
Ա. ՎԱՆՑԵԱՆ

Изданіе Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Секціи Издательской, № 36.

ВОЮЮЩАЯ ТУРЦІЯ

Состав. А. Ванцян

9(496)
Ч-22

ՌՈՍՏՈՎ
Տպարան Ա. Թառայեանցի և Յ. Ստեփանեանցի
1914

Բ. Հ. Կուլտուրական Միութ. հրատարակութիւն

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. «Պատանեկան գրադարան» №№ I—XVII Իւրաքանչիւր գիրքը . . —Ր. 30 կ.
2. Գրանդ Նաւապետի որդիքը — Ժիւլ-Վերնի — փառակազմ 2 ռ. 75 կ. առանց կազմի 1 ռ. 50 „
3. Անգլուխ ձիաւոր — Մայն-Ռիդի — փառակազմ 1 ռ. 75 կ., առանց կազմի — 1 ռ. —
4. Ուշացած վրէժխնդրութիւն Կոնան-Դոյլի — 50 „
5. Աֆրիկեան կաշուէ գուլպայ — Կ. Ֆայլ-կէնՇորսի . . . . . —50 „
6. Христоматія — Ս. Մանդինեանի . — „ 75 „
7. Դիւան Հայոց պատմութեան — Գիւտ ա. քահ. Աղանեանի . . . . 4 „ — „
8. Բանաստեղծութիւններ — Ե. Ցովհաննիսեանի (սպառուած) . . . 1 „ 50 „
9. Վէրք Հայաստանի — Խ. Աբովեանի (սպառ). 50 „
10. Վիլհելմ Տէլլ — Վ. Ousroqoruկու . — „ 5 „
11. Ցրինի — Վ. Ousroqoruկու . . . — „ 5 „
12. Գործնական շերամապահութիւն — Կ. Մելիք Շահնազարեանի . . . — „ 5 „
13. Բամբակի մշակութիւնը — Ն. Տարանտինովի (թարգմանութիւն) . . — „ 5 „
14. Մանր վարկի հաստատութիւնները — „ 5 „
15. Բուսական աշխարհ — Մ.-Շահնազ. (սպառ). 5 „

ԴՐՈՒԱԳՆԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹ. №№ I—XII

16. Արտաշէս Երկրորդ — Վ. Փափազեանի — „ 15 „
17. Գագիկ Երկրորդ նոյնի . „ — 15 „
18. Վարդանանց պատերազմը նոյնի „ — 30 „
19. Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ — Մ. Առաք. 15 „
20. Սահակ և Մեսրոպ — Վ. Փափազեանի — „ 15 „
21. Վահան Մամիկոնեան — Մ. Առաքելեանի 15 „
22. Թորոս Իշխան — Վ. Փափազեանի . — „ 15 „
23. Լեոն Երկրորդ նոյնի . — „ 15 „

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՄՆԱՃԻՂ — № 36.

5 ОСТ 2011
9(496)
Վ-22
1004/1488

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԹՈՒՐՔԻԱՆ

ԳՐԵՑ

Ա. Վ. Ա Ն Ց Ե Ա Ն

Изданіе Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Секціи Издательской, № 36.
ВОЮЮЩАЯ ТУРЦІЯ
Состав. А. Ванцян

ԲԱԿՈՒ
Տպարան Ա. Թառայեանցի և Յ. Ստեփանեանցի
1914

0 8 AUG 2013

Дозволено печатать цензурою

Тип. А. Н. Тараева и О. І. Степанянца, Баку

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԹԻՒՐՔԻԱՆ

—

19-րդ դարի սկզբներից ոչինչ թերևս այնքան պետութիւնների ուշադրութեան առարկայ չի եղել, որքան Արևելեան հարցը։ Մերձաւոր Արևելքը իւր մշտական ալեկոծումներով, ներքին անպատմելի գժտութիւնների պատճառով շարունակ միջազգային դիւանագիտութեան, եւրոպական պետութիւնների հետաքրքրութիւնն է բեւեռել իւր վրայ և նրանց համար նոր ու նոր մտահոգութիւնների, յաճախ նոյնիսկ փոխադարձ ընդհարումների առիթ ծառայել։

Այս դժբախտ դրութեան պատճառը միշտ էլ այն պարագան է եղել, որ օսմանցիների երկիրը՝ Թիւրքիան աւերիչ գործունէութիւնից դուրս, քաղաքակրթական

ոչ մի աշխատանք չէր ցուցահանում։ Մերձաւոր Արևելքի քաղաքականութեան գլխաւոր առանցքը՝ Ցաճկաստանը իւր երկարատև գոյութեան, զինուորական ու ռազմական զարգացման ընթացքում ընդհանուր մարդկութեան, հպատակ և հարևան ժողովրդների համար կուլտուրական արժէքներ չկարողացաւ ստեղծագործել։ Մուրադ II-ի, Սուլթան Սելիմի, Սուլէյման II-ի աշխարհակալ թագաւորութիւնների շրջանը, երբ Թիւրքիան մինչև Վիեննայի պարիսպների տակ՝ Բալկաններում, Հունգարիայում իւր գերիշխանութիւնն էր տարածում, այնքան էլ երկարատև և հիմնաւոր չեղաւ։

Զուրկ ներքին կենսունակութիւնից, կուլտուրական խաղաղ ստեղծագործական աշխատանքից, բարբարոսների երկիրը համարձակ նուաճումների հետ միաժամանակ հպատակ ժողովրդների համար չկարողացաւ բերել այն, ինչ անհրաժեշտ է իւրաքանչիւր պետութեան բնական զարգացման համար։ Թիւրքիան իւր ամ-

բողջ պատմութեան ընթացքում անկարող եղաւ իւր մէջ հիմնաւորապէս զարգացընել պետականութեան գաղափարը։ Նա կարճատև նուաճումներից յետոյ, իւր ժողովուրդի համար դարձաւ մի դժոխային միջավայր, որտեղ ազգութիւնները յառաջադիմելու փոխարէն անընդհատ հիւծւում, սպառւում էին։ Դարերի պատմութեան մէջ Թուրք կատաղի միապետները իրանց հպատակների բարօրութեան, խաղաղ մարդավայել կեանքի մասին հոգ տանելու փոխարէն, մտածում էին թէ ինչ եղանակներով, աւելի արդիւնաւէտ միջոցներով կեղեքեն նրանց, սեփականացնեն վերջին խնայողութիւնները։ Այս քաղաքականութեան պատճառով մի ժամանակ այնքան բարեկեցիկ Հայաստանը, Յունաստանը, Սերբիան և Բուլղարեան աւերուեցին, կորցնելով իրանց նախկին հմայքը։

Զուրկ ներքին ազդակից, կիսավայրենի և կրօնական մոլեռանդութեամբ կուրացած Թիւրքիան պարզ է, որ չէր կարող կանոնաւորապէս զարգանալ և հպատակ

ժողովուրդների դժգոհութիւնը առաջ չբերել։ Այս տեսակէտից 19-րդ դարը օրհասական շրջան է Թիւրքիայի համար։ Սերնդէ սերունդ կուտակուած հարիւրաւոր տարիների ցասումը վերջապէս ժայթքում է Թիւրքիայի բազմազան ժողովուրդների մէջ և լուռ, հպատակ ռայաները իրանց բողոքի ձայնն են բարձրացնում աւերակների կոյտերի միջից։ Երկրի զանազան մասերում հպատակները ապստամբութեան կոչ են հնչեցնում։ Փոքրիկ Յունաստանը երկարատև պայքարից յետոյ 1830 թուին ազատւում է մահմեդականութեան ճիրաններից։ 1859 թուին Ռումինիան անկախութիւն է ձեռք բերում։ Ազատւում է ազատասէր Չերնոգորիան, ապստամբւում է Բոսնիա-Հերցեգովինան։ 1878 թուին Թիւրքիայից վերջնականապէս ազատւում են Սերբիան, Բուլղարիան և այլն։ Կամաց-կամաց Թիւրքիայից բաժանւում են նոյնպէս փոքր Ասիայի ափերում գտնուած արդիւնաւէտ կղզիները, Աֆրիկայի հարուստ գաղութները, Եգիպտոսը, վերջապէս մեր ժամանակներում Տրիպոլիսը, յետոյ Մակեդոնեան, Ալբանիան, Էպիրոսը, Կրետէն։

Հիւանդ մարմնի այս չտեսնուած անդամահատութիւնը վերջ ի վերջոյ հասնում է այն դրութեան, որ եւրոպական բոլոր պետութիւններն էլ շտապում են Թիւրքիայից համեղ պատառներ պոկել և այդ երկրի այս կամ այն մասում որոշ ազդեցութիւն ունենալ։ Թիւրքիան թէպէտ զուրկ սեփական ֆինանսներից, դրամական կարողութիւնից, արդիւնաբերութիւնից, բայց իւր աշխարհագրական շատ յարմար դիրքերով, բնական հարստութեամբ արժէքաւոր է դառնում եւրոպական պետութիւնների համար ոչ միայն քաղաքականապէս, այլ և տնտեսապէս։ Նրա ապագայի հարցով շահագրգռուած են իրանց յայտարարում բոլոր Եւրոպական խոշոր պետութիւնները։ Մերձաւոր Արևելքը իւր վրայ է բեւեռում բոլորի ուշադրութիւնը։

Եւրոպական պետութիւնների այս ազ-

դեցութիւնը Թիւրքիայում սկսւում է Անգլիայից։ Անգլիայի ազդեցութիւնը Թիւրքիայում համեմատաբար հին է։ Մինչև 90-ական թուականները Անգլիան տիրապետող էր մահմեդական աշխարհում։ 80-ական թուականների կիսից արդէն հրապարակ են գալիս նոյնպէս այլ պետութիւններ։ Այստեղ մեզ համար արժէքաւոր է գլխաւորապէս գերմանական ազդեցութիւնը։ Ոչ միայն քաղաքական, այլ և յատկապէս տնտեսական հողի վրայ Թիւրքիայում ծայր է առնում տարբեր շահերի հակամարտութիւնը, որ այսօր իւր հերթին պատճառ է դառնում Թիւրքիայի մասնակցութեանը, Եւրոպական պատերազմում։

Իրերի ներկայ դրութիւնը հասկանալու համար եւրոպական պետութիւնների հակամարտ շահերի վերլուծութիւնը մեզ շատ ու շատ նորութիւններ կարող է ասել։ Յատկապէս 90-ական թուականներից Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին տընտեսապէս իրան շահագրգռուած է յայտարարում նոյնպէս Գերմանիան։ Գերմանիան, որ այդ ժամանակ Անգլիային հարուածում էր բոլոր գաղութներում և նրա ձեռքից խլում էր մայր ցամաքի շուկաներն անդամ, չէր կարող անտարբեր լինել Թիւրքիայի ճակատագրի նկատմամբ։ Բիսմարկի խօսքերը, թէ Գաղութները Գերմանիայի ներվերն են, իզուր չէր ասուած, որովհետև իրօք եւրոպայի մի փոքր տարածութեան վրայ խտացած գերման ժողովուրդի համար գաղութների խընդիրը կեանքի և մահուան հարց էր։ Գերմանիան, Անգլիայի խոշոր մրցակիցը կարճ ժամանակում նուաճեց Կամերունը, Տօգոն, հետագայում Մարշալեան կղզիները, Նոր Գուինէան, ապա Կիաոչիաոն Շանդունում (Չինաստանում), Կարոլինիան, Պալաուսեան կղզիները։ Այս պայմաններում Գերմանիայի գաղութային քաղաքականութեան ճանապարհի վրայ ամենից շահաւէտ և Գերմանիայի համար փայլուն ապագայ խոստացող գաղութը Թիւրքիան էր, որտեղ ինչ գնով էլ լինէր,

անհրաժեշտ էր հաստատուել։ Թիւրքիան համեմատաբար մօտ էր Գերմանիային, բերրի, բնական հարստութիւններով օժտուած, այնպէս որ կարևոր էր Թիւրքիայում անմիջապէս ձեռք բերել տիրապետող ազդեցութիւն։ Մանաւանդ, որ Թիւրքիայի ազատ վայրերում կարելի էր բնակեցնել գերմանացի գաղթականներ և այդ ձևով նոյնիսկ դէպի Միջերկրական ծովը մուտք ունենալ։

Այս անհրաժեշտութիւնը ի նկատի ունենալով, Գերմանական կայսր Վիլհելմը աստիճանաբար բարեկամական յարաբերութիւններ է սկսում Սուլթան Աբդիւլ Համիդի հետ։ Միապետների բարեկամական քօղի տակ ճարպկօրէն սկսուում են Գերմանիայի արագընթաց նուաճումները Թիւրքիայում։ Գերմանիան և նրա հետ Աւստրօ-Հունգարիան ուսումնասիրելով Թիւրքական շուկան, կամաց-կամաց Եւրոպական և Ասիական Տաճկաստանը հեղեղում են իրանց գործարանային տնտեսութեան ապրանքներով։ Աւելի յաջող

արտահանութեան և ապրանքների կանոնաւոր սպառման համար Գերմանիան նախօրօք ապահովեցրեց իրեն նոյնպէս Բաղդադի երկաթուղու կօնցեսսիայով։ Այսօր արդէն իրողութիւն է, որ Թիւրքիա ներմուծուող ապրանքների 10%-ը մատակարարում է Գերմանիան։

Սակայն խնդիրն այն էր, որ Գերմանիայի հետ միասին Թիւրքիայում ակնկալութիւններ ունէին նոյնպէս Ֆրանսիան, Ռուսաստանը, Ամերիկան և Իտալիան, որոնք հաշտ աչքով չէին կարող նայել Գերմանիայի տնտեսական նուաճումներին։ Ֆրանսիան, որի տնտեսական յաջողութիւնները Տաճկաստանում աւելի հին էին քան Գերմանիայինը, նրա վրտանգաւոր մրցումից սարսափած ապահովեցնում է իրեն երկաթուղու նոր կօնցեսսիաների իրաւունքով։ Իտալեան իւր բոլոր ձգտումները պսակում է նրանով, որ Տրիպոլիան է նուաճում, Բալկանեան պետութիւնները՝ Յունաստանը, Սերբիան, Բուլղարիան և Չերնոգորիան Եւրոպական

Թիւրքիան բաժան-բաժան են անում և այլն։

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, նրա քաղաքական շահախնդրութեան շուրջը տարբեր կարծիքներ չեն կարող լինել, որովհետև հարիւրաւոր տարիների ընթացքում ոչ մի պետութիւն Թիւրքիայի հետ այնքան պատերազմներ չի վարել, որքան Ռուսաստանը։ Հակառակ քաղաքական արժէքի կարևորութեան, տնտեսապէս Տաճկաստանը միայն վերջին տարիներս է Ռուսաստանի ուշադրութեան առարկայ դառնում։ Միայն ռուս-եապօնական դժբախտ պատերազմից յետոյ Ռուսաստանը խորապէս զգաց տնտեսական նուաճումների անհրաժեշտութիւնը և այդ ուղղութեամբ սկսեց օտար շուկաներում որոշ աշխատանք կատարել։ Մասնաւորապէս Մերձաւոր Արևելքի շուկան Ռուսաստանի աչքում առանձին գին էր ստանում, որովհետև նա սահմանակից էր Կովկասին։ Մինչ այդ անտարբեր, բաւական անշարժ ռուս դրամագլուխը մտաւ Տաճկաստան և

սահմանակից վայրերում առևտրական գործակալների միջոցով յաջողութիւններ ունեցաւ։ Մասնաւորապէս տաճկահայկական շրջաններում, վեց վիլայէթները (Վան, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս, Սըվազ, Դիարբեքիր) աստիճանաբար առևտրական սերտ յարաբերութիւնների մէջ մտան Ռուսաստանի և գլխաւորապէս Կովկասի հետ։ Ռուսաստանը, որ մինչ այդ Տաճկաստան ապրանք ներմուծում էր ոչ աւել քան 5 միլիոն ռուբլու, 1910, 1911, 1912 թուակ. սկսում է արդէն տարեկան 25—27 միլիոն ռուբլու ապրանք ներմուծել Տաճկաստան։ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Աւստրո-Հունգարիայի հետ միասին Ռուսաստանը որոշ տեղ է գրաւում Թիւրքիա ներմուծուող ապրանքների գործում։

Այսօր Ռուսաստանը Տաճկաստանի շուկաներում վաճառում է շաքար, մանուֆակտուրային ապրանքներ, նաւթ, երկրագործական պիտոյքներ, սպիրտ և այլն։ Մասնաւորապէս նաւթ, սպիրտ, շաքար

մեծ չափով է արտահանում, որովհետև ռուս կառավարութիւնը արդիւնաբերութեան այդ ճիւղերի համար առանձին յարմարութիւններ է ստեղծում։ Երկաթուղու էժան ճանապարհները, կառավարութեան ակցիզի նուէրները նպաստում են արտաքին արդիւնաբերութեան զարգացման։ Շնորհիւ ռուս կառավարութեան աջակցութեան, ռուսական շաքարը Մերձաւոր Արևելքի շուկաներում աւելի էժան է ծախւում, քան ներքին շուկայում։ Այսօր իրողութիւն է, որ ռուս կառավարութիւնը տնտեսապէս շահագրգռուած է Տաճկաստանի և Ռուսաստանի սերտ յարաբերութիւնների խնդրում։ Այս յարաբերութիւնների կարևորութիւնը մեզ համար աւելի է պարզւում, եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ Ռուսաստանի արտաքին առևտուրը սպասելիքներ ունի գլխաւորապէս Հեռաւոր և Մերձաւոր Արևելքի շուկաներից, որովհետև եւրոպական քաղաքակիրթ երկրների շուկաները ռուս

արդիւնաբերութեան համար մեծ չափով անմատչելի են։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Տաճկաստանում տնտեսապէս, ուրեմն և քաղաքականապէս շահագրգռուած են եւրոպական բոլոր խոշոր պետութիւնները։ Թիւրքիայում խիստ կերպով բաղխւում են այդ պետութիւնների հակամարտ շահերը։ Թիւրքիան ապրում է մի ժամանակամիջոցում, երբ ամեն կողմից պետութիւնները լարուած սպասում են հիւանդ մարմնի անդամահատութեան ժամին։ Բոլորն էլ իրանց պահանջները, ակնկալութիւններն են հրապարակ հանում։

Այս ծանր պարագայում պարզ է, որ դժբախտ երկիրը վերահաս վտանգից փրկելու համար թիւրք պետական գործիչների համար մի միջոց է մնում։ Մնում է միայն խաղաղ կուլտուրական աշխատանքը, ներքին վերածնութիւնը։ Ներկայ պատմական վարկեանը ամենից յարմարն էր ազատուելու եւրոպական պետութիւնների շահադիտական ձգտումներից, պէս-

պէս եղծնակներով հրապարակ եկող հովանաւորութիւնից։ Այդ մեծ աշխատանքը գլուխ բերելու համար Թիւրք պետական գործիչները միայն պիտի մտածէին քայքայուած, յետամնաց երկրի տնտեսական, արդիւնաբերական ոյժերի զարգացման, կրթական գործի կանոնաւորման, ազգային հարցի լուծման և ընդհանրապէս աւերուած պետութեան իրաւական ու տնտեսական վիճակի բարւոքման մասին։ Ներկայումս այս ուղղութեամբ զարգացող խելահաս գործունէութիւնը միայն կարող կլինէր Թիւրքիային ազատել օտար պետութիւնների ախորժակներից և ընդհանրապէս ստեղծուած տագնապալից կացութիւնից։

Սակայն դժբախտութիւնն այն էր, որ Թիւրքիայի արկածախնդիր ղեկավարները թողած գործունէութեան միակ բանական ուղին, իրանց ողորմելիութեամբ, կաշառուած ղերմանական ոսկիներից, ապարէզ նետուեցին և կուսի դաշտ կանչեցին Ռուսաստանին, Անգլիային և Ֆրան-

սիային, որոնց ստւերից անգամ առաջներում սարսափում էր Տաճկաստանը։ Թիւրք խեղճ ու կրակ ժողովուրդը այսօր իւր ապիկար ղեկավարների պատճառով զրկւում է պատմական վերջին ժառանգութիւնից և որպէս քաղաքական միութիւն՝ քարտէզից թերևս իսպառ վերանում։

Այսօրուայ պատերազմում եթէ Թիւրքիան մասնակցութիւն ունի հակառակ ժողովուրդի կամքի, ապա այդ պէտք է բացատրել միմիայն նրանով, որ պետութեան գլուխ են կանգնած երիտասարդ Թիւրքերը։ Այդ կուսակցութեան ներկայացուցիչները աւելի շատ ղերմանական գործակալներ են, քան Թիւրքիայի բարօրութեանը նախանձախնդիր պետական գործիչներ։ Գերմանական ազդեցութիւնը, որ Թիւրքիայում վաղուց էր սկսած, երիտասարդ Թիւրքերի տիրապետութեան շրջանում իւր գագաթնակէտին հասաւ։ Երիտասարդ Թիւրքերի տիրապետութիւնը Տաճկաստանում սկսւում է 1908 թուի յեղափոխութիւնից։ Կարմիր Սուլթանի դա-

1004
178867

ժան ռեժիմը փոխարինող երիտասարդ թիւրքերի կառավարութիւնն ևս իւր հետ ոչինչ չբերեց նահատակ հպատակների համար։

Տարիների ընթացքում երիտասարդ թիւրքերը անկարող եղան իրենց միջից դուրս բերել լուրջ, պետութեան շահերն ըմբռնող քաղաքագէտներ, որոնք երկիրը անցեալի թալանից, աւերակներից հանէին և դնէին կուլտուրական ճանապարհի վրայ։ Դժբախտաբար պետութեան գլուխն անցան այնպիսի բախտախնդիրներ, որոնք մոռանալով քայքայուած ժողովուրդի, հասարակութեան շահերը, օրէնք և արդարութիւն մուրող թիւրքիայի համար մի ողբերգական դրութիւն ստեղծեցին, որից յաջողութեամբ դուրս պրծնելն անհնարին էր։ Այս իսկ պատճառով երիտասարդ թիւրքերի կառավարութեան ժամանակ թիւրքիան ընկնում է Գերմանիայի կատարեալ ազդեցութեան տակ. Բոսֆորի ափերում տարածւում է Գերմանիայի հովանաւորութիւնը։ Տաճկաստանը սկսում են կառավարել գերմանացի պաշտօնեաները։ Այս պայ-

մաններում Գերմանական կայսրը իրաւունք ունէր յայտարարել իրեն մահմեդականութեան հովանաւոր։ Վիլհելմը ըսկզբում Հոլց փաշային, ապա գեներալ Սանդերսին թիւրքիա է ուղարկում, որոնք իրենց ձեռքում կենտրոնացնելով թիւրքիայի ռազմական ոյժը, էապէս իրանց են ենթարկում ամբողջ պետութիւնը։

Երիտասարդ թիւրքիայի ներկայացուցիչների՝ Էնվէր փաշայի, Թալաթ բէյի և գերմանացի Սանդերսի, Վագենհէյմի, ծովապետ Սուշօնի բարեկամութեան ու գաղտնի դաւադրութիւնների հետևանքը թիւրք խեղճ ու կրակ ժողովուրդի համար լինում է այն, որ մի օր Տաճկաստանը, հակառակ հպատակների և պետական գործիչների մեծամասնութեան կամքի, պատերազմ է սկսում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հետ։

Որովհետև հիւծուած թիւրք ժողովուրդը դէմ էր այդ պատերազմին, ուստի Գերմանիան ոչ մի միջոցի առաջ կանգ չառաւ թիւրքիայում պատերազմա-

կան տրամադրութիւն ստեղծելու համար։ Մասնաւորապէս գերմանական ոսկիները Թիւրք պաշտօնեաների համար անչափ գըրաւիչ էին հայրենիքի պատուի հետ համեմատած։

Թիւրքիայի և Երրեակ Համաձայնութեան պատկանող պետութիւնների յարաբերութիւնների լարումը սկսւում է նրանից, որ երիտասարդ. Թիւրքերը դեռ Եւրոպական պատերազմի սկզբներում, Գերմանիայի դրդմամբ լուրջ խոչնդոտներ են առաջ բերում Թիւրքիայում ապրող Երրեակ Համաձայնութեան պատկանող պետութիւնների հպատակների և պաշտօնական անձնաւորութիւնների նկատմամբ։ Պաշտօնական Թիւրքիան Ռուսաստանին, Անգլիային և Ֆրանսիային զրգռելու համար ամենից առաջ վերացնում է այն յատուկ արտօնութիւնները, որ Տաճկաստանում ունէին մեծ պետութիւնները (կապիտուլացիաները)։ Այդ արտօնութիւնների շնորհիւ եւրոպական պետութիւնները Թիւրքիայում ունէին ինքնա-

վար իրաւունքներ։ Այս իրաւունքների հիման վրայ օտարահպատակները Թիւրքիայում ենթարկւում էին իրենց դեսպաններին, այդ դեսպաններից միայն դատւում, պատասխանատուութեան կանչւում այլն։ Թիւրքիան զրչի մի հարուածով ոչնչացրեց օտարահպատակների այդ իրաւունքները։

Սակայն երբ Գերմանիան տեսաւ որ կապիտուլիացիաների վերացումն ևս առանձին յուզմունք առաջ չբերեց քաղաքակիրթ երկրներում, այն ժամանակ նա դրդեց Երիտասարդ Թիւրքերին փակել Դարդանելը և այդ ձևով մի այնպիսի հարուած տալ Ռուսաստանի տնտեսութեանը, որ նա իւր կենսական շահերի ոտնահարումից ստիպուած Թիւրքիային պատերազմ յայտարարի։ Սեպտեմբերի վերջերին Տաճկաստանը փակուած է յայտարարում Դարդանելը։

Իրօք Դարդանելի փակումը մեծ հարուած էր ռուս արդիւնաբերութեան համար։ Բաւական է ասել, որ ռուսական

արտահանութեան 50%-ը կատարւում է Դարդանելի նեղուցով։ Չնայած այս հանգամանքին, Դարդանելի փակումն էլ այն հետևանքները չունեցաւ, ինչ սպասում էր Գերմանիան։ Ռուսաստանը Դաշնակիցների հետ միասին բաւականացաւ միայն նրանով, որ պաշտօնապէս դիմումն արաւ Թիւրք կառավարութեանը բանալ Դարդանելը։ Եւրոպական մեծ պատերազմը ստիպում էր դաշնակից պետութիւններին խոհեմութեամբ արհամարել Թիւրքիայի զբրգռիչ քայլերը և սպասել, որ թերևս իրանք Թիւրքերը զգաստութեան գան։

Սակայն Երրեակ Համաձայնութեան պատկանող պետութիւնների սառն վերաբերմունքը միամիտ Թիւրքիայի կողմից ընդունուեց իբրև երկչոտութեան նշան։ Թիւրքիայի կարճամիտ առաջնորդներն սկսեցին աւելի անպատկառանալ։ Սեպտեմբերի 28-ից Թիւրքերը թոյլ տուին պատերազմական յարձակումներ կատարել ռուս-պարսկական սահմանի վրայ, Ատրբեջանի շրջանում, որ ռուսական զօրքն էր պահպանում քրդական շարժումներից։ սահմանագլխի այս քրդական շարժումներից, Ուրմիայի պաշարումից յետոյ, հոկտեմբերի 16-ին միանգամայն անսպասելի կերպով, Էնվէր փաշայի և գերմանացիների գաղտնի ծրագրի համեմատ Թիւրքական պատերազմական նաւերը ռմբակոծեցին ռուսական ծովափնեայ քաղաքներից Օդեսսան, Թէոդոսեան, Նովորոսսիյսկը։ Այս աւազակային յարձակումից յետոյ, անշուշտ մեծ Ռուսաստանը անտարբեր չէր կարող մնալ։ Ռուս արտաքին գործերի նախարար Սազանովի կարգադրութեամբ Կոստանդինոպոլսի ռուսական դեսպան Գիրսը ստիպուած էր թողնել Բոսֆորի ափերը։ Հոկտեմբերի 20-ին Ռուսաստանը պաշտօնապէս պատերազմ յայտարարեց Տաճկաստանին։

Կայսերական հրովարտակը ի միջի այլոց հպատակներին յայտարարում էր։

«Մինչև օրս անյաջող կերպով կռուելով Ռուսաստանի դէմ, Գերմանիան և Աւստրո-Հունգարիան ձգտում էին բազմա-

ցնել իրենց ոյժերը, դրա համար էլ դիմեցին Օսմանեան կառավարութեանը և նրան շլացնելով՝ մղեցին մեր դէմ պատերազմելու։ Գերմանացիների ղեկավարութեամբ թիւրքական նաւատորմիղը համարձակուեց նենդամտութեամբ յարձակուել մեր Սև Ծով-եան ափերի վրայ, որից յետոյ մենք անմիջապէս հրամայեցինք Պոլսի ռուսական դեսպանին՝ հիւպատոսարանների բոլոր պաշտօնեաների հետ թողնել Թիւրքայի սահմանները»։

Ցարսկոյէ Սելոյում գրուած այդ պատմական Հրովարտակը վերջանում է հետևեալ խօսքերով.

«Ամբողջ ռուս ժողովրդի հետ մենք անյողդողդ հաւատում ենք, որ Թիւրքիան ներկայումս անմտօրէն խառնուելով այս պատերազմին, միայն արագացնում է իւր համար ճակատագրական պատահարների ընթացքը և բաց է անում Ռուսաստանի ճանապարհը, Սև Ծովի ափերում իրագործելու իր պապերի աւանդած պատմական նպատակները»։

Կայսերական Հրովարտակի վերջին խօսքերը արդէն պարզ ու որոշ կերպով ցոյց են տալիս այն ձգտումները, որ Ռուսաստանը իրագործելու է Տաճկաստանի պարտութիւնից յետոյ։

Այսօր, երբ պատերազմը արդէն իրողութիւն է, երբ ռուսական և թրքական բանակները ինչպէս Օլթիի նոյնպէս և Էրզրումի ճանապարհի վրայ իրար են բաղխում, մեզ համար նշանակութիւն ունի այն պարագան, թէ ինչ է սպասում Թիւրքիային այս պատերազմից յետոյ։

Կասկած չկայ, որ այս պատերազմը ամենից առաջ խպառ քայքայելու է Թիւրքիային, և նրա քաղաքական նշանակութիւնը կորցնելու։

Թիւրքիան անկարող է քիչ շատ կանոնաւոր կերպով պատերազմ մղել, որովհետև առանց ներքին տնտեսական ապահովութեան չի կարելի զօրաժողով անել, զօրք հաւաքել, բանակներ շարժել։ Ոչինչ այնքան դումարներ և հսկայական զոհաբերութիւններ չի պահանջում, որքան պա-

տերազմը։ Պատերազմի դաշտ համարձակութեամբ դուրս գալու և յաջողութեան որոշ գրաւականներ ունենալու համար ամենից առաջ անհրաժեշտ են դրամական միջոցներ։

Մինչդեռ հէնց այդ տեսակէտից մօտենալով ժամանակակից Թիւրքիային, մենք տեսնում ենք, որ նա իրօք միանգամայն խեղջ վիճակի մէջ է։ Այսօրուայ Թիւրքիան տնտեսապէս այնքան հիւծուած է, որ յիրաւի զարմանալի է, որ նա համարձակութիւն ունի պատերազմի դուրս գալու և իւր գոյութեան հարցը հրապարակում դնելու։ Անշուշտ Գերմանիան դրամական ինչպիսի խոստումներ էլ անի, Տաճկաստանին չի կարող փրկել վերահաս տագնապալից կացութիւնից և տնտեսական այն քայքայումից, որ անխուսափելի է Օսմանեան աշխարհի համար։ Թիւրքիայում անընդհատ կրկնուող փոխառութիւնները նոյնիսկ աւելի են զարկ տալիս ծայր առած ճգնաժամին։ Բաւական է ասել, որ Թիւրքիայի բնակչութիւնը Փոքր-Ասիա-

յում Տաճկաստանի ամենակարևոր մասում աստիճանաբար պակսում է, Ժողովուրդը մի միլիոնի չափ քչացել է արդիւբերութիւնը կանգ առել։

Մի փոքրիկ ակնարկ ձգելով ներկա-Թիւրքիայի վրայ, մենք տեսնում ենք, որ այդ երկիրը դեռ նահապետական տնտեսութեան յետամնաց շրջանն է ապրում։ Հողն է, որ 20 միլիոն բնակչութեանը կերակրում է։ Սակայն կառավարութեան անփթութեան պատճառով գիւղական տնտեսութիւնը ևս Տաճկաստանում աւելի յետ են գնում։ Հողը կորցնում է իւր նախկին արժէքը և նոր արդիւնաբերական ձևերով չի փոխարինւում։ Ներկայումս Թիւրքիայի բնակչութիւնը իւր չարքաշ գոյութիւնը պահպանում է ցորենի, ծխախոտի գարու և եգիպտացորենի արտահանութեամբ։ Ընդհանուր թուերով Թիւրքիայում ապրանքների ներմուծումը տարեկան հասնում է 268 միլիոն ռուբլու, իսկ արտահանութիւնը 167 միլիոնի։ Արդէն այս թուերը մեզ ցոյց են տալիս, որ Թիւր-

քիայի առևտուրը չափազանց աննպաստ պայմանների մէջ է։ Նա աւելի է ներմուծում, և իր երկրից աւելի շատ դրամ դուրս տանում, քան թէ ստանում է։ Սրբան աւելացրէք այն հանգամանքը, որ Թիւրքիան ունի ողորմելի պետական բիւջէ, ոչ աւել 150 միլիոն ռուբլուց, իսկ պարտքը 1 միլիարդ ու կէս ռուբլի։

Թիւրքական աղքատիկ բիւջէի ամենախոշոր մասը, գործադրւում է եւրոպական պարտքերի տոկոսների վճարումների վրայ։

Թիւրքիայի տնտեսութեան հիւանդոտ կողմն այն է, որ նա հնարաւորութիւն չունի ներքին կենսունակ, յամառ աշխատանքի ընդունակ ոյժեր ստեղծելու և ամբողջապէս կուլ է գնալու եւրոպական կապիտալին։ Այս պայմաններում երկրի ղեկավարները փոխանակ կուլտուրական աշխատանքների մասին մտածելու, իրենց սիստեմատիկ կորստաբեր գործունէութեամբ պետութեան մէջ եղած քիչ շատ կենսունակ տարրերի զարգացման առաջն էլ առնում են։ Օրինակ Հայ տարրը, որ տնտեսական կեանքում խոշոր դեր է կատարում, արդիւնաբերական աշխարհին զգալի չափով ուղղութիւն տալիս, տաճկական կառավարութեան կողմից ոչ մի աջակցութիւն չի տեսնում։ Պետութիւնը իր խեղճ գոյութիւնը քարշ է տալիս միջնադարեան պետութիւնների նման և ապրում է սրանից, նրանից խլելով, պարտքեր անելով, թագաւորական հողերը, կալւածները վաճառքի հանելով։ Դեռ պատերազմից առաջ Թիւրքիայում հպատակ ժողովուրդները հեծում էին հարկերի ծանր բեռի տակ։ Գիւղական ժողովուրդը իւր ամբողջ կեանքում անվերջ տալիս է, իւր խնայողութիւնները հրապարակ հանում, բայց դրա փոխարէն կառավարութիւնից ոչինչ չի ստանում։ Թիւրքիայում ճանապարհներ չկան, երկաթուղիներ չըկան։

Այսպիսի աննախանձելի դրութեամբ Թիւրքիան պատերազմ սկսեց։ Բնական է, որ նրան միայն մի միջոց էր մնում, որ և

այժմ գործադրում է։ Արդէն յայտնի է, որ Թիւրք կառավարութիւնը սեփականացնում է բոլոր խաղաղ քաղաքացիների, յոյն, հայ վաճառականների, արդիւնաբերողների կարողութիւնը։ Կառավարութիւնը յափշտակում է արդիւնաբերողների պահեստներում գտնուած շաքարը, նաւթը, շորեղէնը, կաշուեղէնը և այդ բոլորի դիմաց ոչ մի վարձատրութիւն չի տալիս։

Անկախ այս հանգամանքից, միւս կողմից Թիւրքիայում ներքին երկպառակութիւնը ծայրահեղ չափերի է հասնում, և նեղ կուսակցական անհամաձայնութիւնը նոր աղէտների դուռ բաց անում։ Պատերազմը մինչև այսօր ժողովուրդի համակրութիւնը չի վայելում։ Եբիտասարդ Թուրքերի հակառակորդ Իթտիլաֆ կուսակցութիւնը հեշտութեամբ չի կարող մոռանալ 1913 թուի յեղափոխութեան զոհերին։ Հանգուցեալ Քեամիլ փաշայի կողմնակիցները յարմար բոպէ են որոնում նոր յեղափոխութիւն ստեղծելու։

Այս դրութեան մէջ, երբ ներքին անհամաձայնութիւնը մեծ է և ժողովրդի մէջ բացակայում է ազնիւ ոգևորութիւնը, Թիւրքիան սպասելիքներ չի կարող ունենա պատերազմից. պարզ է, որ Թիւրքիայի նուաճումները Պարսկաստանում, կամ ժամանակաւոր մանր յաջողութիւնները ապագայի տեսակէտից արժէք չեն կարող ունենալ։ Տուժողը միայն դժբախտ գաղթող ժողովուրդն է։

Վերջացնելով մեր ասելիքը, գալիս ենք այն եզրակացութեան, որ Գերմանիայի բարեկամութիւնը Թիւրքիային չափազանց թանգ է նստելու։ Նա արջի ծառայութիւնից ոչինչ չի շահելու, բացի մեծամեծ կորուստներից։

Արդէն այսքանը պարզ է, որ Թիւրքիան այլ ևս անկարող է վերակենդանանալ։ Տանջանքների մէջ տառապող հիւանդ մարմինը վերջապէս դիականալու է և այդպիսով թերևս իւր յաւիտենական հանգիստը գտնելու։

Պատերազմից յետոյ, եթէ Թիւրքիան

բոլորովին էլ չվերանայ, այնուամենայնիւ նա իւր ներկայ քաղաքական արժէքը բոլորովին կորցնելու է և փոքր Ասիայում դառնալու է մի երկրորդական պետութիւն։ Թիւրքիայից անխուսափելի կերպով անջատուելու են բոլոր տարրերը, որոնք մինչև այսօր այդ դժբախտ երկրում իրանց հարազատ չեն զգացել։ Միայն Թիւրքիայի ազատումը այդ երկրումն ապրող ժողովուրդներին խաղաղութիւն կը բերի։

---

24. Մանրիկեան իշխաններ Մուշեղ և Մանուել Մ. Ֆ. Ղազարեանի . . — „ 30 կ.
25. Հայկազանց թագաւորներ Ի. Տեր-Ղազար. 15 „
26. Միքայել Նալբանդեանի տնտեսական թէօրիան—Ներ. Պալեանի . . — „ 25 „
27. Անասնապահութիւն—Ի.Բ. Լիբօմուդրովի (թարգմ.) Մասն I—Ընտ. կենդան. խնամքը և հիւանդութ. պաշտ. միջոցն. 30 „
28. Անասնապահութիւն—նոյնի. Մասն II և III—Ընտանի կենդանիների վարակիչ և ոչ-վարակիչ հիւանդութիւնների մասին 50 „
29. Ի՞նչ տիպի ստորին և միջնակարգ դպրոցների կարիք ունի ներկայումս Անդրկովկասը—Կ. Ց. Խաչիսեանի . — „ 15 „
30. Голодъ — Ս. Զաւարեանի . — „ 30 „
31. Կանոնագիր շտեմարան գանձարանի—նոյնի 2 „
32. Վարկատու ընկերութեան կանոնադրութիւն (փոխադրութիւն) . . — „ 30 „
33. Հացահատիկների մարգային կուլտուրան—Դ. Ղարագեօզեանի : . — „ 5 „
34. Ի՞նչ բան է զէմստվօն—Ի. Բելեկօնսկու (թարգմանութիւն) . . . — „ 5 „
35. Սայեաթ-Նովա—կենսագրութիւնը և երգերի ընտիր ժողովածուն . — „ 5 „
36. Պատերազմող Թիւրքիան . . — „ 5 „
37. Ինձ մի խնդրիր—բոմանս խօսք Յ. Թումանեանի, ներդաշնակութ. Ա. Մայիլեանի 40 „
38. Ողի Հայաստանի—գունատիպ նկար— „ 50 „
39. Արտաշէսի յուղարկաւորութի[illegible] նատիպ նկար . . [illegible]
40. Կովկասի քարտէզ (20 վերստ[illegible] ազգաբնակ. խտութիւնը Կով[illegible]

Դահեստը զտնւում է Միւռեան [illegible]
Հասցէն՝ Баку, Армян. Купьту[illegible]

Հայաստանի Ազգային գրադարան
NL0422809

17Ж51

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.